ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2021թվականի նոյեմբերի 17-ի 44-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 16-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱԶԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՍՊԵՏ
ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐՄԱՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍԵՎԱԴԱ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ
ՂՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԱՄ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՆԱ
ՍԻՄՈՆՅԱՆ ԼՈՐԱ
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐԳԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2022թ. մայիսի 18-ի N 32-Ա որոշման
Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու
2022թ. մարտի 10-ի N 16-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 45

Հ/Հ	ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (համայնքային ծառայության պաշտոնների մասով նաև՝ ծածկագիրը)	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) (ՀՀ դրամ)	ԳՈՒՄԱՐԸ (ՀՀ դրամ)
	ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Համայնքի ղեկավար	1	390000	390000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	310000	310000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	196000	196000
	ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	114000	114000
5	Համայնքի ղեկավարի օգնական	1	114000	114000
6	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	97000	97000
	ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
7	Վարչական ղեկավար /Կոռնիձոր, Խնածախ բնակավայրերի/	2	196000	392000
8	Վարչական ղեկավար /Խոզնավար, Վաղատուր, Քառաշեն, Առավուս բնակավայրերի/	4	180000	720000
	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
9	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	310000	310000
10	Գլխավոր մասնագետ-հաշվապահ (2.3-1)	1	300000	300000
11	Առաջատար մասնագետ (3.1-1)	1	150000	150000
12	Առաջատար մասնագետ (3.1-2)	1	150000	150000
13	Առաջատար մասնագետ (3.1-3)	1	150000	150000
14	1-ին կարգի մասնագետ (3.2-1)	1	133000	133000
15	1-ին կարգի մասնագետ (3.2-2)	1	133000	133000
16	2-րդ կարգի մասնագետ (3.3-1)	1	114000	114000
17	2-րդ կարգի մասնագետ (3.3-2)	1	114000	114000
18	2-րդ կարգի մասնագետ (3.3-3)	1	114000	114000
19	2-րդ կարգի մասնագետ (3.3-4)	1	114000	114000
20	2-րդ կարգի մասնագետ (3.3-5)	1	114000	114000
21	2-րդ կարգի մասնագետ (3.3-6)	1	114000	114000
22	2-րդ կարգի մասնագետ (3.3-7)	1	114000	114000
23	2-րդ կարգի մասնագետ (3.3-8)	1	114000	114000
24	2-րդ կարգի մասնագետ (3.3-9)	1	114000	114000
25	2-րդ կարգի մասնագետ (3.3-10)	1	114000	114000
26	2-րդ կարգի մասնագետ (3.3-11)	1	114000	114000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
27	Տեղի համայնքապետարանի գործավար	1	97000	97000
28	Տեղի մշակույթի տան ակումբավար	1	91275	91275
29	Տեղի մշակույթի տան հսկիչ	1	88312	88312
30	Կոռնիձորի մշակույթի տան ակումբավար	1	91275	91275
31	Տեղ գյուղի գրադարանավար	1	88312	88312
32	Կոռնիձոր գյուղի գրադարանավար	1	91275	91275
33	Խոզնավար գյուղի գրադարանավար	0,5	88312	44156
34	Տեղի համայնքապետարանի հավաքարար	1	88312	88312
35	Տեղի մշակույթի տան հավաքարար	1	88312	88312
36	Կոռնիձորի մշակույթի տան հավաքարար	1	88312	88312
37	Տնտեսվար	1	88312	88312
38	Էլեկտրիկ	1	88312	88312
39	Պահակ	1	88312	88312
40	Վարորդ	1	100000	100000
	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
41	Անասնաբույժ	1	150000	150000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**44,5**		**6284477**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմը ձևավորվել է 2016 թվականի նոյեմբերի 1-ին: Համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատվել են ըստ նախնական տեսակետներով ձևավորված գործառույթների հիման վրա: Քանի որ գործառույթների տեսակներն ու քանակն ավելացել են, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայելու նախկինում եղած համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկը, ինչպես նաև համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում կատարել փոփոխություններ՝ ըստ գործնականում կիրառվող գործառույթների: Ծառայություններ մատուցող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի հաստիքները նույնպես ձևավորվել էին նախկինում և ներկայումս ետ են մնացել նոր խնդիրների լուծման պահանջների կատարումից:

2021 թվականի հոկտեմբերի 17-ին Տեղ համայնքում անցկացված համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքում ձևավորվեց համայնքի ավագանու կազմը, ընտրվեց նոր համայնքի ղեկավար, որն էլ աշխատակազմի կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դյուրքաչափերը ներկայացրել է համանքի ավագանու հաստատմանը:

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարվել են փոփոխություններ ՝ հաշվի առնելով վարչատարածքային բարեփոխումների շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և գործառույթների կարևորությունը:

Համաձայն վերագրյալի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված, **տեղական ինքնակառավարման մարմինների ներքին կառուցվածքները համայնքային խնդիրների լուծմանը համապատասխանեցնելու** սկզբունքի տրամաբանությունից ելնելով, համայնքապետարանի աշխատակազմում նախատեսվում է ավելացնել մեկ հաստիք /Խոզնավար գյուղի գրադարանավար/, որպեսզի Տեղ համայնքի Խոզնավար բնակավայրում գործի գրադարանը:

Ելնելով վերոգրյալից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Տեղ համայնքի ավագանու որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022թվականի մարտի 10-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Տեղ համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**